

Հավելված

Հայաստանի Հանրապետության կրթության,  
գիտության, մշակույթի և սպորտի նախարարի  
2019 թվականի հունիսի 23-ի  
հմ. 30-Լ հրամանի

«Հավելված

Հայաստանի Հանրապետության  
կրթության և գիտության նախարարի  
2018 թվականի հունիսի 12-ի  
հմ. 588-Լ հրամանի

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԵԻ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության լեզվի կոմիտեն (այսուհետև՝ Լեզվի կոմիտե) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ենթակա պետական մարմին է, որը մասնակցում է լեզվի բնագավառում քաղաքականության մշակմանը, ապահովում է այդ քաղաքականության իրականացումը, «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների կատարումը՝ լեզվաքաղաքականության բնագավառում հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:

2. Լեզվի կոմիտեն ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով:

3. Լեզվի կոմիտեն գործում է Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

4. Լեզվի կոմիտեի անվանումն է՝

1) հայերեն՝ Հայաստանի Հանրապետության լեզվի կոմիտե.

2)ռուսերեն՝ Կոմитет по языку Республики Армения.

3) անգլերեն՝ Language Committee of Republic of Armenia.

4) ֆրանսերեն՝ Comité de Langue de la République d'Arménie:

5. Լեզվի կոմիտեն ունի Հայաստանի Հանրապետության գինանշանի պատկերով ու իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք և ձևաթղթեր: Լեզվի կոմիտեն կարող է ունենալ խորհրդանշից և անհատականացման այլ միջոցներ:

6. Լեզվի կոմիտեի կառուցվածքում ընդգրկվում են Լեզվի կոմիտեի նախագահի, Լեզվի կոմիտեի նախագահի տեղակալի, Լեզվի կոմիտեի նախագահի օգնականների պաշտոնները և կառուցվածքային ստորաբաժանումները:

7. Լեզվի կոմիտեին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է վերապահվել պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:

8. Լեզվի կոմիտեի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0028, Կիևյան 16:

## II. ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԵԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

9. Լեզվի կոմիտեի նպատակներն են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական լեզվի շահերի պաշտպանությունը, լեզվի բնագավառում պետական միասնական քաղաքականության մշակումը և այդ քաղաքականության իրականացման ապահովումը.

2) հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում պետական լեզվի՝ հայերենի գործառության ապահովումը:

10. Լեզվի կոմիտեի խնդիրներն են՝

1) «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, հայերենի կիրառությունը կարգավորող օրենքների, այլ իրավական ակտերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության պետական ծրագրի պահանջների կատարման ապահովումը.

2) Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզվի՝ արդի գրական հայերենի կանոնարկմանը, բառակերտման, տերմինաբանության (եզրաբանության), ուղղագրության, ուղղախոսության, տառադարձության և կետադրության կանոնարկման սկզբունքների մշակմանը, ինչպես նաև ուղղագրության միասնականացմանը նպաստելը.

3) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս բնակվող հայերի շրջանում հայերենի պահպանմանն ու տարածմանը աջակցելը.

4) Հայաստանի Հանրապետության տարածքում ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը երաշխավորելը.

5) լեզվավիճակի ուսումնասիրության, վերլուծության և գնահատման հիման վրա լեզվի բնագավառը կարգավորող օրենսդրությունը կատարելագործելը:

### III. ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

11. Լեզվի կոմիտեն իր նպատակների ու խնդիրների իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝

1) մասնակցում է լեզվի բնագավառում քաղաքականության մշակմանը և ապահովում այդ քաղաքականության իրականացումը, ինչպես նաև մշակում է լեզվի բնագավառի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի նախագծերը.

2) իրականացնում է՝

ա. լեզվաքարոզություն՝ (լեզվական քաղաքականությանը վերաբերող հարցերին նվիրված համաժողովների, գիտագործնական հանդիպումների, խորհրդակցությունների կազմակերպում, հանրային ցանցերում Լեզվի կոմիտեի ներկայություն),

բ. լեզվական փորձաքննություն (հայոց լեզվի բառային կազմին, քերականական կանոններին լեզվական նյութի համապատասխանության որոշում),

գ. լեզվավիճակի մշտադիտարկումներ, ուսումնասիրություններ, օրենքով նախատեսված կանխարգելիչ այլ միջոցառումներ.

3) ապահովում է՝

ա. «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների կատարումը և լեզվական քաղաքականության պետական ծրագրի իրականացումը,

բ. գրական հայերենի կանոնարկումը և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանոնարկված լեզվական իրողությունների գործածությունը,

գ. ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների պաշտպանությունը,

4) աջակցում է՝

ա. Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պետական լեզվական քաղաքականության իրականացմանը,

բ. հեռուստառադիոլուսկերությունների՝ մշակութային, տեղեկատվական, վերլուծական, հասարակական-քաղաքական, գիտահանրամատչելի, մանկական, կրթական և մարզական հաղորդումների լեզուն գրական հայերենը լինելու պահանջի կատարմանը.

## 5) նպաստում Է՝

ա. Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվող հայերի շրջանում հայոց լեզվի պահպանմանը և տարածմանը՝ համագործակցելով մշակութային, կրթական, հետազոտական, հասարակական, հայրենակցական և այլ կազմակերպությունների հետ,

բ. ոչ հայախոսների համար հայերենի ուսուցման հատուկ ծրագրերի և ուսումնական նյութերի մշակմանը.

## 6) ուսումնասիրում, մշտադիտարկում է (ներառյալ՝ կանխարգելիչ այլ միջոցառումները՝

ա. Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պետական լեզվական քաղաքականության իրականացման վիճակը,

բ. Հայաստանի Հանրապետության կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման և դաստիարակության լեզուն գրական հայերենը լինելու պահանջի կատարումը,

գ. Հայաստանի Հանրապետության բոլոր միջնակարգ-մասնագիտական, մասնագիտական-տեխնիկական և բարձրագույն ուսումնական հաստատություններում հայոց լեզվի ուսուցումը կամ հայոց լեզվի մուտքի քննությունը ապահովելու պահանջի կատարումը,

դ. Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) գործավարությունը գրական հայերեն կատարելու պահանջի կատարումը,

ե. Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) ցուցանակները, ձևաթղթերը, դրոշմանիշները, նամականիշները, կնիքները, միջազգային փոստային ծրարները և գովազդի բոլոր միջոցները հայերեն ձևավորելու պահանջի կատարումը,

զ. համագումարներում, նստաշրջաններում, ժողովներում, գիտաժողովներում, հրապարակային ատենախոսությունների և պաշտոնական ու հանրային միջոցառումների, հեռուստառադիրադրումների ժամանակ ոչ հայերեն ելույթների գուգահեռ հայերեն թարգմանությունը ապահովելու պահանջի կատարումը,

է. Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող արտասահմանյան պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների պետական վերահսկողության ենթակա փաստաթղթերը հայերենով գուգակցելու պահանջի կատարումը,

ը. պաշտոնատար անձանց և սպասարկման առանձին ոլորտներում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ գրական հայերենին տիրապետելու պահանջի կատարումը,

թ. Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող անձանց պաշտոնական ելույթների լեզուն օրենքով նախատեսված դեպքում գրական հայերենը լինելու պահանջի կատարումը.

7) Լեզվական պարզաբանումներ է տալիս հայերենի կանոնարկման և կիրառման, անձնանունների, հայրանունների և ազգանունների, աշխարհագրական տեղանունների, ինչպես նաև առանձնահատուկ բարդության տերմինների, հասկացությունների վերաբերյալ.

8) պարբերաբար անցկացնում է լեզվավիճակի վերլուծություն ու գնահատում, կազմում, մշակում և հրապարակում է նյութեր.

9) կազմակերպում է լեզվաքաղաքականության հարցերին նվիրված միջոցառումներ, խորհրդակցություններ, գիտաժողովներ, սեմինարներ, ասուլիսներ.

10) կատարում է քաղաքացիների ընդունելություն, ինչպես նաև նրանց դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկում.

11) համագործակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների համանման կազմակերպությունների հետ, կատարում է փոխադարձ այցելություններ և փորձի փոխանակում:

12. «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, հայերենի կիրառությունը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարումն ապահովելու նպատակով իրականացնում է օրենքով նախատեսված այլ գործառույթներ:

#### **IV. ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ**

13. Լեզվի կոմիտեն կառավարում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը (այսուհետև՝ նախարար):

14. Նախարարը՝

1) հաստատում է Լեզվի կոմիտեի կանոնադրությունը, դրանում կատարում փոփոխություններ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

2) հաստատում է Լեզվի կոմիտեի կառուցվածքը և սահմանված կարգով կատարում կառուցվածքային փոփոխություններ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

3) Լեզվի կոմիտեին վերապահված գործունեության ոլորտին, նպատակներին և խնդիրներին համապատասխան սահմանում է Լեզվի կոմիտեի գործունեության հիմնական ուղղությունները.

4) իրականացնում է Լեզվի կոմիտեի գործունեության վերահսկողությունը.

5) լսում է Լեզվի կոմիտեի գործունեության մասին հաշվետվությունները, քննում գործունեության ստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում Լեզվի կոմիտեին ամրացված կամ նրա օգտագործմանը հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ.

7) որոշում է Լեզվի կոմիտեին ամրացված գույքի օգտագործման և տիրապետման կարգը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

8) հաստատում է Լեզվի կոմիտեի տարեկան հաշվեկշիռը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

9) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

15. Լեզվի կոմիտեն ղեկավարում է Լեզվի կոմիտեի նախագահը:

16. Լեզվի կոմիտեի նախագահին անմիջականորեն հաշվետու են Լեզվի կոմիտեի նախագահի տեղակալը, Լեզվի կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպությունների, հիմնարկների ղեկավարները, օգնականները և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

17. Լեզվի կոմիտեի նախագահը հաշվետու է Հայաստանի Հանրապետության Կառավարությանը, Հայաստանի Հանրապետության վարչապետին և նախարարին:

18. Լեզվի կոմիտեի նախագահը՝

1) պատասխանատու է Լեզվի կոմիտեի առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար.

2) իր իրավասության սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից, ինչպես նաև տալիս է Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

3) իրականացնում է Լեզվի կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների կառավարումը.

4) օրենքով կամ Լեզվի կոմիտեի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում նշանակում և ազատում է Լեզվի կոմիտեի համապատասխան աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ, նշանակում կարգապահական տույժեր.

5) հաստատում է Լեզվի կոմիտեի ներքին կարգապահական կանոնները.

6) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ստեղծում է Լեզվի կոմիտեի նախագահին կից խորհրդակցական մարմիններ.

7) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Լեզվի կոմիտեի նախագահի տեղակալի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող իրամանները, իրահանգները, կարգադրություններն, ցուցումները, հանձնարարականները.

8) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Լեզվի կոմիտեի Ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների ղեկավարների Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող իրամանները, իրահանգները, կարգադրություններն, ցուցումները, հանձնարարականները.

9) լսում է կառուցվածքային ստորաբաժանումների, Լեզվի կոմիտեի Ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների հաշվետվությունները, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

10) իրականացնում է օրենքով, իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

19. Լեզվի կոմիտեի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է Լեզվի կոմիտեի նախագահի տեղակալը:

20. Լեզվի կոմիտեի հաստիքացուցակը Լեզվի կոմիտեի նախագահի առաջարկությամբ հաստատում է նախարարը:

21. Լեզվի կոմիտեի նախագահի տեղակալը՝

1) գործում է Լեզվի կոմիտեի նախագահից պատվիրակված լիազորությունների ուժով և համակարգում է աշխատանքներն իրեն հանձնարարված ոլորտում.

2) իր լիազորությունների շրջանակներում Լեզվի կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներին, Լեզվի կոմիտեի Ենթակայությանը հանձնված կազմակերպություններին և հիմնարկներին փոխանցում է Լեզվի կոմիտեի նախագահի հանձնարարականները, ապահովում է Լեզվի կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների, Լեզվի կոմիտեի Ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների կողմից Լեզվի կոմիտեի նախագահի հանձնարարականների կատարումը, իր լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն՝ արդյունքների մասին տեղեկացնելով Լեզվի կոմիտեի նախագահին.

3) իր համակարգման լիազորությունների շրջանակներում՝

ա. համագործակցում է այլ մարմինների և կազմակերպությունների հետ,

բ. Լեզվի կոմիտեի նախագահին ներկայացնում է առաջարկություններ.

4) Կատարում է Լեզվի կոմիտեի նախագահի ցուցումներն ու հանձնարարականները:

22. Լեզվի կոմիտեի նախագահի տեղակալն օրենքով նախատեսված դեպքերում կարող է ունենալ օգնական: Լեզվի կոմիտեի նախագահի տեղակալն իր օգնականի անմիջական դեկավարն է: Լեզվի կոմիտեի նախագահի տեղակալի օգնականն անմիջականորեն հաշվետու է Լեզվի կոմիտեի նախագահի տեղակալին:

## **V. ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

23. Լեզվի կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) Լեզվական վերահսկողության բաժին.

2) Վարչական իրավախախտումների բաժին:

24. Լեզվի կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանում է Լեզվի կոմիտեի նախագահը՝ հաստատելով դրանց կանոնադրությունները:

## **VI. ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՒՅՔԸ**

25. Լեզվի կոմիտեն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

26. Լեզվի կոմիտեի գույքը ձևավորվում է օրենսդրությամբ սահմանված կարգով Լեզվի կոմիտեի տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից:

27. Լեզվի կոմիտեին հանձնվող գույքի կազմն ու չափը որոշում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

28. Լեզվի կոմիտեն իր իրավասության սահմաններում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ինչպես նաև քաղաքացիական պարտականություններ է ձեռքբերում և իրականացնում նախարարության գլխավոր քարտուղարի միջոցով:

29. Լեզվի կոմիտեն տիրապետում, օգտագործում, իսկ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում նաև տնօրինում է իրեն հանձնված գույքը:

## **VII. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

30. Լեզվի կոմիտեի աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմին-

ներ ներկայացնում ֆինանսական, հարկային, մաքսային, պարտադիր վճարների և վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

31. Լեզվի կոմիտեի աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել առողջիւ վերստուգման՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:»: